Հավելված 2
«23» հունվարի -ի 2025 թ.
կնքված N ԴՏՊ-1141-11018/25 ՀԿԱՐ 4 պայմանագրի

**Դրամաշնորհային հաշվետվություն N 1**

**1. Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» «Փոքրիկ Իշխան» ցերեկային սոցիալական կենտրոն Արտաշատ |
| Դրամաշնորհի N | *ԴՏՊ-1141-11018/25 ՀԿԱՐ 4* |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | *ՀՀ ԱՍՀՆ* |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | *«Հայկական Կարիտաս» ԲՀԿ* |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | *03.01.2025-31.12. 2025 թթ..* |
| Հաշվետու ժամանակահատված | *03.01.2025թ.-31.03.2025թ.* |
| Ներկայացման օր | 11.04.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | *Արմինե Եփրեմյան/ծրագրի ղեկավար/* |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

| |
|---|
| **Համառոտ բովանդակությունը՝** «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների» տրամադրում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մինչև 18 տարեկան երեխաների ընտանիքում ապրելու և նրանց սոցիալական ներառումն ապահովելու նպատակով զարգացնել երեխաների ֆիզիկական, մտավոր և հոգեկան կարողություններն ու կյանքի հիմնական հմտությունները, երեխաներին և նրանց ընտանիքներին տրամադրել սոցիալական, հոգեբանական և իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն՝ խթանելու երեխաների սոցիալական, կրթական, առողջապահական և ընտանիքում մեծանալու հիմնարար իրավունքների իրացումը, կանխելու նրանց մուտքը հաստատություններ և /կամ նրանց սոցիալական մեկուսացումը:<br>Շահառու երեխաները ընդգրկված են կենտրոնի կողմից կազմակերպվող կրթադաստիարակչական՝ մշակութային, ֆիզիկական, հոգևոր կարողությունները զարգացնող միջոցառումներին՝ ըստ գնահատված սոցիալական կարիքների և անհատական սոցիալական ծրագրի:<br>Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են շահառուների փաստաթղթավորում՝ դիմում,կարիքի գնահատում,խորքային գնահատում,անձնական փաստաթղթերի հավաքագրում,անհատական քարտեր, մշակվել են անհատական սոցիալական ծրագրերը:<br><br>Հաշվետու ժամանակահատվածում ԿԴԻՀ երեխաների թիվը եղել է.<br>• **Հունվար՝** 128 երեխա /82 ընտանիք/<br>• **Փետրվար՝** 130 երեխա /88 ընտանիք/<br>• **Մարտ՝** 129 երեխա /90 ընտանիք/<br>Հաշվետու ժամանակահատվածում ՑԽԿ-ում ընդհանուր առմամբ ծառայություն է ստացել 141 երեխա, որից 29-ը Արցախից բռնի տեղահանված ընտանիքների երեխաներ են:<br>Իրականացվել են շահառու ընտանիքների դիմումների ընդունում, փաստաթղթերի հավաքագրում, կարիքների գնահատում և ԱՍԾ-ների կազմում: Իրականացվել է շահառուների անձնական տվյալների բազայի ստեղծում:<br><br>Հաշվետու ժամանակահատվածում 5-18 տարեկան 141 երեխաների հետ իրականացվել են 24 խմբային աշխատանք (յուրաքանչյուր խմբում 15-20 երեխա) անձնական հիգիենայի, ընկերության և հանդուրժողականության, իրավունքների և պարտականությունների վերաբերյալ՝<br>• Իմ սպասելիքներն ու պլանները 2025թ.-ից<br>• Ընկերության կամուրջներ<br>• Աշխատանք թիմում և համագործակցության հմտությունների զարգացում<br>• Կոնֆլիկտների արդյունավետ կառավարման հմտություններ |

- Ինչպե՞ս դիմավորեցի Ամանորը թեմայով
- Երազանքներ. դրանց հասնելու ճանապարհը
- Նմանություններ
- Անձնական հիգիենայի պահպանման կանոնները սեռահասունացման շրջանում
- Ես և իմ սահմանները
- Ինչպե՞ս օգնել նոր ընկերներին ինտեգրվել խմբում
- Թումանյանի «Անխելք մարդը» հեքիաթի քննարկմանը
- Երազանքներ. դրանց հասնելու ճանապարհը
- Նմանություններ
- Գոհունակության տարա
- Իմ սիրելի մուլտհերոսները, որոնցից կարևոր բաներ եմ սովորել
- Ճանաչենք միմյանց
- Ի՞նչն եմ արժևորում միջանձնային փոխհարաբերություններում
- Խզբզոց-խառնաշփոթ
- Դրական հետադարձ կապ: Համոզախոսություն
- Հակառակ գործողություն
- Երեխայի տարիքային իրավունքներն ու պարտականությունները
- Տարիքային հուզական դժվարությունները և հաղթահարման տարբերակները
- Տեղեկատվական հիգիենա
- Ես երբեք ...

Երեխաները ցերեկային կենտրոնում գտնվելու ժամանակահատվածում ապահովված են ամենօրյա տաք սննդով, հիգիենիկ պարագաներով և գրենական պիտույքներով: Հաշվետու ժամանակահատվածում երեխաների կարիքների գնահատման հիման վրա առանձնացվել են կրթական կարիքները՝ ոչ ֆորմալ կրթական դասընթացների և խմբակներին մասնակցելու նպատակով:
Երեխաների հետ պարբերաբար իրականացվել են անհատական և խմբային քննարկումներ, որի արդյունքում խմբակներին մասնակցել են՝

- էթիկա և քաղաքավարություն՝ 141 երեխա
- սպորտ, առողջ ապրելակերպ՝ 138 երեխա
- կար ու ձևի խմբակ՝ 22 երեխա
- անգլերենի խմբակ՝ 26 երեխա
- համակարգչի խմբակ՝ 18 երեխա
- ձեռքի աշխատանք և դիզայն՝ 33 երեխա
- խոհարարության խմբակ՝ 24 երեխա
- հեյլունագործության խմբակ՝ 14 երեխա
- Նկարչության խմբակ՝ 53 երեխա

Հաշվետու ժամանակահատվածում անհատական սոցիալական աշխատանքների տրամադրման միջոցով շարունակվել են շահառու երեխաների սոցիալական պաշտպանության ծառայությունները՝ ընտանեկան, դպրոցական և համայնքային

կյանքում խնդիրների բացահայտման և լուծման նպատակով: Ի հայտ եկած խնդիրներնը ստացել են իրենց անհրաժեշտ լուծումները:
Անհատական սոցիալական աշխատանքներ են իրականացվել հասակակիցների հետ շփման բարելավման , ինքնուրույնության զարգացման , հիգիենայի պահպանման, վարքայի խնդիրների շտկման նպատակներով:

Շահառու 100 երեխաների հետ իրականացվել է 7 խմբային հոգեբանական աշխատանք՝ (յուրաքանչյուր խմբում 10-17 երեխա):

Շահառու 9-13 տարեկան 14 երեխաների հետ իրականացվել է հոգեբանական ուսուցողական խաղ «Հարցախեղդուկ» թեմայով, որի նպատակն էր զարգացնել կրիտիկական մտածողությունը, թիմային աշխատանքը և համագործացկությունը:

Շահառու 6-8 տարեկան 15 երեխաների հետ իրականացվել է հոգեբանական խմբային աշխատանք «Ամպիկ» թեմայով, որի նպատակն էր նպաստել երեխաների ներքին ուժերի, ռեսուրսների, հաղթահարման կառուցողական մարտավարությունների ակտիվացումը:

Շահառու 5-10 տարեկան 14 երեխաների հետ իրականացվել է ճանաչողական գործընթացները՝ մտածողությունը, ուշադրության կենտրոնացումը, կամայական հիշողությունը, հաղորդակցման, կողմնորոշման հատկությունները զարգացնող, ամաչկոտությունը հաղթահարող վարժություններ.

- «Նկարիչը»
- «Արգելված թիվ»
- «Ինքնանկար»
- «Ո՞վ ավելի շատ պատճառ ունի»
- «Անալոգներ»
- «Շարունակի՛ր նախադասությունը»
- «10 բառ»
- «Իմ տրամադրությունը»

Շահառու 7-14 տարեկան 17 երեխաների հետ իրականացվել է խմբային հոգեբանական աշխատանք՝ դժվար իրավիճակներում արդյունավետ գործելու, խնդիրները լուծելու հմտությունների զարգացման նպատակով՝ «Սուպերհերոս» թեմայով:

Շահառու 8-12 տարեկան 17 երեխաների հետ իրականացվել է հոգեբանական խմբային աշխատանք՝ օգնելու երեխաներին ճանաչել այն դրսևորումները, որոնք ունենում են տվյալ հույզը զգալիս, ինչպես նաև հաղթահարման մեխանիզմները մշակելու նպատակով՝ «Հուզական ինտելեկտ» թեմայով:

Շահառու 6-10 տարեկան 12 երեխաների հետ իրականացվել է ներքին ուժերն ու ռեսուրսները ակտիվացնելու, դրական և արժեքավոր պահերի մասին հիշողությունները կենտրոնացնելու նպատակով խմբային հոգեբանական աշխատանք՝ «Քաղցր պահերով զանձատուփ» թեմայով:

Շահառու 10-16 տարեկան 14 երեխաների հետ իրականացվել է հոգեբանական խմբային աշխատանք՝ «Անավարտ նախադասություններ» թեմայով՝ երեխաների ինքնաճանաչումը և ինքնավերլուծությունը խթանելու նպատակով:

Շահառու 8-12 տարեկան 10 երեխաների հետ իրականացվել է հոգեբանական խմբային աշխատանք՝ ինքնաճանաչման և ինքնակարգավորման հմտությունները զարգացնելու նպատակով (հույզերի ճանաչում, վարքային ինքնակարգավորում)՝ «Ինքնաճանաչում և ինքնակարգավորում» թեմայով:
Հաշվետու ժամանակահատվածում խոսքի և հաղորդակցման խանգարումների բացահայտման, կանխարգելման ու հաղթահարման նպատակով լոգոպեդական անհատական աշխատանքներ են իրականացվել 8 շահառու ( 6-17 տարեկան ) երեխաների հետ: Իրականցվել են լոգոպեդական շտկողական աշխատանքներ և արտաբերական ապարատը մարզող վարժություններ:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ՝ ԿԴԻՀ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բացահայտման և ծրագրում ընգրկելու նպատակով:
Ծրագրի թիմի կողմից կազմակերպվել է կլոր սեղան-հանդիպումներ պետական շահակիր կառույցների հետ՝ ԱՄՆՀ, ՄՄԾ, ՏՄԱԿ, դպրոցներ, ոստիկանություն, պոլիկլինիկա,
Ծրագրի մասնագետների կողմից երեխաներին տրամադրվել է զարգացման, ուսուցման հնարավորություններ, գիտելիքներ անձնական հիգիենայի պահպանման վերաբերյալ, ընդգրկվել են կարողություններին և հմտություններին համապատասխան խմբակներում, ստացել են անհատական տեխնիկական միջոցներ, դասագրքեր, հատուկ գրենական պիտույքներ:

Հաշվետու ժամանակահատվածում անձնական օգնականի ծառայության տրամադրվել է շահառու 3 երեխաների, ովքեր ունեն հաշմանդամություն, ինտելեկտուալ ֆունկցիաների թեթև և միջին մտավոր հետամնացություն,միկրոցեֆալիա,էմոցիաների և վարքի խանգարում: Կենտրոնում երեխաների համար անձնական օգնական են հանդիսացել յուրաքանչյուր երեխայի սոցիալական աշխատողը, ով աջակցել է վերջինիս զբաղվել անձնական հիգիենայի պահպանմամբ, հաղթահարել սոցիալականացման դժվարությունները՝ ինտեգրվել միջավայրում, սերտացնել շփումը

հասակակիցների հետ: Անձնական օգնականը, գնահատելով երեխայի կարիքները, ուղղորդել է վերջինիս մասնակցելու նախընտրած խմբակներին՝ ապահովելով նրա ակտիվ մասնակցությունը, օգտագործելով սեփական կարողությունները: Երեխայի ներառման նպատակով անձնական օգնականը ապահովել է վերջինիս մասնակցությունը համայնքում և կենտրոնում իրականացվող կրթական և մշակութային միջոցառումներին:

Երեխաների հետ իրականացվել են անհատական սոցիալական աշխատանքներ՝ հմտությունների զարգացման,կյանքի որակի բարելավման, հասարակությանը ինտեգրման նպատակով: Ծնողներին տրամադրվել է ընտանեկան խորհրդատվություն՝ զբաղվածության,ընտանեկան հարաբերությունների տնտեսավարման և այլ թեմաներով:

Շահառու երեխաները ներգրավված են կյանքի հմտությունների զարգացման հնարավորություններում՝ խթանելով նրանց ներուժը որպես ակտիվ քաղաքացի, հարստացնելով երեխաների ներաշխարհը:

**Հունվարի 2-ին** 22 շահառու երեխաներ այցելել են Ամո Խարազյանի անվան դրամատիկական թատրոն և մասնակցել են «Բարի Դոբին» ներկայացմանը:

**Փետրվարի 5-ին** շահառու 23 երեխաներ այցելել են Երևանի «Ուրարտու» ֆուտբոլային ակումբ, թանգարան: Ֆուտբոլասեր երեխաները ծանոթացել են ակումբի պատմությանը, իրերի և ժապավենների միջոցով վերականգնել են անցյալի խաղերը: Երեխաները հնարավորություն են ունեցել անցնել հանդերձարանից մինչև մարզադաշտ՝ հայտնի ֆուտբոլիստների ճանապարհով:

**Փետրվարի 12-ին** կենտրոնում նշվել է Տյառնընդառաջի տոնը, որին մասնակցել են 43 շահառու երեխաներ:

**Փետրվարի 27-ին** շահառու 26 երեխաներ այցելել են Հայաստանի ազգային պատկերասրահ:

**Մարտի 19-ին** ծրագրի աշխատակիցները մասնակցել են «Զարգացման տարբեր խանգարումներ ունեցող երեխաների համատեղ ներգրավվածությունը խմբային աշխատանքներում» թեմայով դասընթացին՝ «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի «Նպաստել Հայաստանում բոլորի համար ներառական, համապատասխան և որակյալ կրթության կայացմանը» ծրագրի շրջանակներում:

**Մարտի 27-ին** սպորտի միջազգային օրվա առիթով Արտաշատի 18 շահառու երեխաներ այցելել են Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ինստիտուտ՝ ծանոթացել ուսանող դառնալու հնարավորություններին, այնուհետև ինստիտուտի կողմից երեխաները ստացել են նվերներ:

Մարտի 28-ին շահառու 25 ծնողների համար կազմակերպվել է ծնողավարման դասընթաց՝ «Արդյունավետ հաղորդակցում դեռահասի հետ. ինչպես խոսել նրա հետ, որպեսզի լինել լսված և ինչպես լսել նրան, որպեսզի նա խոսի» թեմայով:

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի մասնագետները համագործակցել են ՏԻՄ-երի և ՄՍԾ հետ, մասնակցել են ՄՍԾ -ի կողմից կազմակերպված սոցիալական համագործակցության համակարգող խորհրդի նիստերին:

Շահառու ծնողներին տրամադրվել է անհատական սոցիալ-հոգեբանական խորհրդատվություն՝ նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ՝ իրավունքներ կրթական ոլորտում, ինչպես հաղթահարել սոցիալական խնդիրները, ինչպես արձագանքել տարբեր հուզական դրսևորումներին, ինչպես ապահովել երեխայի համար վստահելի միջավայր, պահպանել երեխայի հիգիենան, ակտիվությունը, սննդակարգը:

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների՝ նշելով Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

Շահառու երեխաները ընդգրկված են եղել բոլոր կրթադաստիարակչական՝ մշակութային, ֆիզիկական, հոգևոր կարողությունները զարգացնող միջոցառումներին՝ խաղերի և տարբեր վարժությունների միջոցով:
Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունները հստակ տեսանելի են, շահառու երեխաները սոցիալապես ակտիվ են,ընդգրկված են համայնքային կյանքում, հաճախում են համայնքային մշակութային օջախներ, զգալիորեն բարելավված է կյանքի հմտությունների որակը:
Նոր շահառու երեխաները ներառված են կենտրոնում:
Բոլոր շահառուների հետ կնքվել են սոցիալական բնույթի նվիրաբերության պայմանագրեր:
Կազմակերպվել են միջոցառումներ ծրագրի շահառու երեխաների, ծնողների և շահագրգիռ կառույցի ներկայացուցիչների հետ միասին: Հասարակության անդամները ստանձնել են երեխաների/երիտասարդների զարգացման գործում աջակցելու պատասխանատվություն:
Բոլոր միջոցառումներն ուղղված են դեպի սոցիալականացում, կրթություն՝ պատրաստելով անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքի իրացմանը, զարգացնելով ինքնավստահությունն ու հաղորդակցման հմտությունները: Երեխաները ծանոթացել են սեփական ընդունակություններին,

ինչը նպաստել է երեխաների մտածողության զարգացմանը, լայնացրել նրանց մտահորիզոնը՝ ազդելով անձնային ու հոգեկան որակների զարգացման վրա:
Երեխաները կենտրոնի աշխատակիցների հետ պարբերաբար իրականացրել են շրջապատի մաքրման և հարդարման աշխատանքներ:
Ոչ ֆորմալ կրթական խմբակների մասնակցության արդյունքում երեխաները տիրապետում են էթիկայի և առողջ ապրելակերպի կանոններին, ձեռք են բերել խոհարարական հմտություններ, բարելավվել են անգլերենի իմացության մակարդակը, զարգացրել են կարողությունները կար ու ձևի, հեյունաազործության,նկարչության,ձեռքի աշխատանք և դիզայնի ասպարեզում:
Մասնակցելով համակարգչի խմբակին երեխաները տիրապետում են Word, Excel համակարգչային ծրագրերին և ուսումնասիրել են արհեստական բանականության որոշ գործիքները: Բոլոր միջոցառումների կազմակերպման ժամանակ խրախուսվել և կարևորվել է երեխայի կարծիքը:
Սոցիալ-հոգեբանական միջոցառումների արդյունքում երեխաները հասակակիցների հետ հարաբերություններում դրսևորում են ոչ խնդրահարույց վարքագիծ: Վարքային խնդիրներ ունեցող երեխաների թիրախ խմբի մոտ ձևավորվել են մտածողության, վարքային դրսևորումների կոնստրուկտիվ, արդյունավետ հմտություններ: Վերջիններս հաղթահարել են հասակակիցների հետ շփման բարդույթները:
Ծնող-երեխա փոխհարաբերություններն ամրապնդվել են: Կենտրոնի շահառու ծնողների 80%-ը տիրապետում է երեխաների և իրենց իրավունքներին և պարտականություններին, ծանոթ են բռնության բացասական հետևանքներին: Շահառու ընտանիքի անդամները մասնակցում են կենտրոնում կազմակերպված միջոցառումներին և խմբակներին:
Առկա են մասնակիցների ցանկ, նկարներ, գնահատման թերթիկներ:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0LXcBu1XjGkhwQAFmyyGCH5yQUx33rFNXLtwV2Rjy8PdokwRLoGRMuZ3zFi6RA59Ul

https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid0GuNszsfaABXP6fKufiYDgj3ThsZ8qnDdnNaYW1vgmGb5rXJJK9SVJAzBWsnZLZFVl

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաջորդ եռամյակում կշարունակվեն մատուցվել ծրագրով նախատեսված ծառայությունները:
Կշարունակվեն համագործակցությունները մանկատների, ՏՄԱԿ-ի, համայնքապետարանի և ՏԻՄ-երի հետ, կկազմակերպվեն կլոր սեղան քննարկումներ:
Նախատեսվում է երեխաների հետ համատեղ կազմակերպել միջոցառումներ որոնք միտված կլինեն երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը:
Կենտրոնում կկազմակերպվի բաց դռների օր, ցուցահանդես՝ երեխաների կարողությունների և հմտությունների, ձեռքի աշխատանքների ցուցադրման համար:
Երեխայի տարիքային առանձնահատկությունների, ճգնաժային փուլերի ծանոթացման նպատակով կշարունակվեն ծնողավարման դասընթացները և մայրերի ինքնաջակցման խմբային հանդիպումները:
Շահառու երեխաների համար կկազմակերպվի էքսկուրսիաներ՝ մշակույթային ժառանգության պահպանության փոխանցման նպատակով:
Կշարունակվեն կազմակերպվել միջոցառումներ շրջակա միջավայրի պահպանման նպատակով:
Հաջորդ եռամյակում կվերագնահատվեն եռամսյա ծառայություն ստացած շահառու երեխաների կարիքները՝ արդյունքում ի հայտ եկած նոր կարիքները կարտացոլվեն շահառուների ԱՄԾ-ներում:

Շահառու երեխաների և ծնողների հետ կշարունակվեն մարզի Առաքելական եկեղեցու քահանայի հանդիպումներն ու զրույցները՝ ամուր պետություն, ընտանիք և կայուն հասարակություն ունենալու նպատակով:
Շահառու ծնողների հետ կկազմակերպվի հանդիպում՝ մասնագիտական կարողությունների զարգացման նպատակով:

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

Ծրագրի աջակցությամբ շահառու մեկ երեխա անցել է աչքի հետազոտություն, տրամադրվել է օպտիկական ակնոց:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան | «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն<br>Գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան |
| ---------------------------------------<br>(ստորագրություն) | ---------------------------------------<br>(ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |